ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի
Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժին ներգրավված
փորձագետ Արման Գալստյանի 2024 թ. նոյեմբերի 4-ից 2024 թ. դեկտեմբերի 20-ն
ընկած ժամանակահատվածի

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գլխավոր քարտուղարի 2024 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 531-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) և 2024 թվականի նոյեմբերի 4-ին կնքված № 13 պայմանագիրով ընդգրկվել եմ Կոմիտեի Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում որպես փորձագետ:

Համաձայն Հրամանով հաստատված հավելվածի 5-րդ կետի՝ ներկայացնում եմ 04.11.2024-20.12.2024 թվականներն ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. իրականացրել եմ Կոմիտեի թվայնացման գործընթացների և միասնական թվայնացման միջավայրի ուսումնասիրություն,
2. տեղեկատվության հավաքագրում Կոմիտեի ստորաբաժանումների գործառույթների թվայնացման վերաբերյալ,
3. կազմակերպել եմ քննարկում ՀՀ ԲՏԱ նախարարության պաշտոնատար անձանց հետ՝ Կոմիտեի գործառույթների էլեկտրոնային գործընթացի ավտոմատացման, չթվայնացված տվյալների թվայնացման և Կոմիտեի բիզնես գործընթացների էլեկտրոնային տարբերակների ստեղծման վերաբերյալ,
4. իրականացրել եմ Կոմիտեի կողմից տեղեկատվության տվյալների քարտեզագրման ու դասակարգման գործընթացների ծրագրային համակարգի գործարկման աշխատանքները,
5. իրազեկել եմ SS ոլորտին վերաբերվող և Կոմիտեի առնչվող խնդիրների արագ լուծման և թվայնացման մասին,
6. ներկայացրել եմ թվայնացման ուղղությամբ Կոմիտեի գործառույթների ընթացիկ (մեկնարկած և չավարտված) ծրագրերի մասին տեղեկատվությունը,
7. իրականացրել եմ պետական գույքի (այդ թվում՝ բաժնետոմսերի) օտարման և վարձակալության համար իրականացվող աճուրդի անցկացում էլեկտրոնային համակարգի միջոցով՝ սկսած աճուրդի մասին հրապարակվող հայտարարությունից մինչև աճուրդի իրականացում, մասնակիցների գրանցում, հաղթողի ճանաչում և աճուրդի արդյունքների հրապարակում և այլ,
8. բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում

Քարտուղարության արտաքին կապերի և
ինֆորմատիկայի բաժնի փորձագետ Արման Գալստյան

20 դեկտեմբերի 2024թ.